https://doi.org/10.46991/S&L/2023.95.026

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԲՆՈՐՈՇՄԱՆ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ[1]

Հասմիկ Հակոբյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

Արդի ժամանակաշրջանում յուրաքանչյուր իրավական պետության առջև դրված ամենակարևոր խնդիրներից մեկը կոռուպցիայի դեմ պայքարն է: Սահմանադրական այնպիսի արժեքների պահպանումը, ինչպիսիք իրավունքի գերակայությունն ու կայուն զարգացումն են, հնարավոր չէ երաշխավորել առանց կոռուպցիայի դեմ պայքարի մշտական և կազմակերպված միջոցառումների իրականացման: Կարելի է ասել՝ կոռուպցիան այն խնդիրների համախումբն է, որը մշտապես թուլացնում է հասարակության իրավական ինստիտուտների կայունությունն ու իմունիտետը:

Յուրաքանչյուր հիվանդության արդյունավետ բուժման ամենակարևոր գրավականը ճիշտ և հստակ ախտորոշումն է: Նույն մոտեցումը կարելի է դրսևորել նաև իրավական հիմնախնդիրների լուծման հարցում. մասնավորապես՝ իրավական յուրաքանչյուր խնդիր, անօրինական յուրաքանչյուր վարքագիծ նախ պետք է ստանան իրավական հստակ ախտորոշում, որպեսզի դրա հաղթահարման համար ընտրված միջոցները գործեն արդյունավետ և ծառայեն հետապնդած նպատակի իրագործմանը:

Սույն ուսումնասիրության հիմքում ընկած է հենց վերոնշյալ մեթոդաբանությունը, քանի որ ուսումնասիրության շրջանակներում մեր առջև դրված խնդիրը հանգում է առանցքային այնպիսի հարցադրման բացահայտմանը, ինչպիսին է կոռուպցիայի բնորոշումը:

Կոռուպցիայի բնորոշման հիմնախնդրի դիտարկման անհրաժեշտությունը պայմանավորված է կոռուպցիայի դեմ պայքարի համար մշակվող ռազմավարական փաստաթղթերի, ինչպես նաև իրավական կարգավորումների շրջանակներում կոռուպցիայի բնորոշման բացակայությամբ, ինչն էլ մի շարք դեպքերում կարող է հանգեցնել տարընկալումների՝ կոռուպցիայի դեմ պայքարը դարձնելով առավել բարդ և անիրագործելի: Ուստի մեր կողմից տրվող բնորոշումն ու կոռուպցիայի հատկանիշների վերհանումը կարող են էական նշանակություն ունենալ կոռուպցիայի դեմ պայքարի հարցում մշակված կարգավորումները մեկնաբանելիս և կիրառելիս:

Հատկանշական է, որ կոռուպցիայի՝ որպես արատավոր երևույթի դեմ պայքարում են ոչ միայն պետություններն իրենց կառավարման համապատասխան մարմինների միջոցով, այլև հասարակությունը՝ կոռուպցիոն բնույթ ունեցող երևույթները մշտապես հասարակական պարսավանքի ենթարկելով: Սակայն այդ նույն հասարակության անդամը, շատ դեպքերում՝ նաև պետական կառավարման համապատասխան մարմինը կոռուպցիա ասելով հասկանում են գլխավորապես կամ բացառապես կաշառակերություն, մինչդեռ կոռուպցիայի սահմանները շատ ավելի լայն են ու համընդգրկուն, որի բովանդակության ամբողջական բացահայտումը մեծ կարևորություն է ներկայացնում դրա դեմ պայքարի գործընթացն առավել արդյունավետ և իրատեսական դարձնելու համար:

[1] Սույն հոդվածը զեկուցվել է 2022թ. դեկտեմբերի 8-ի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին:

Ընդունելով ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայով ամրագրված գաղափարն առ այն, որ կոռուպցիան համապարփակ երևույթ է և ազդում է հասարակությունների և տնտեսությունների վրա, արձանագրում ենք, որ ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական օրենսդրական մակարդակներում կոռուպցիան իրապես դիտարկվում է որպես ժողովրդավարական գաղափարները խարխլող, իրավական պետության հիմքերը թուլացնող երևույթ, որի ուսումնասիրումն ու դրա դեմ պայքարի միջոցների մշակումը մեծ կարևորություն են ներկայացնում:

Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր խնդրի դեմ պայքարի համար նախ անհրաժեշտ է ճանաչել խնդիրը, հստակեցնել այն, հասկանալ, թե ինչ բաղադրիչներից է բաղկացած, ինչ հատկանիշներ և բովանդակություն ունի:

Կոռուպցիայի բնորոշման և բովանդակության բացահայտման նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ ենք համարում նախ ներկայացնել այդ հարցի շուրջ ձևավորված տեսական մոտեցումները:

Այսպես. գիտական գրականության մեջ մասնագետներից շատերը, յուրովի մեկնաբանելով կոռուպցիան, տալիս են տարաբնույթ և երբեմն ոչ միանշանակ բնորոշումներ՝ պայմանավորված դրա բազմագործոն փոխազդեցություններով: Կոռուպցիայի բնորոշման մեջ, ի լրումն որոշակի ուղղության առնչվող առանցքային գործոնների՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, հաշվի են առնվում նաև այնպիսիք, ինչպիսիք են՝ գաղափարախոսական և ազգային-մշակութային առանձնահատկությունները, սոցիալական կապերը և հարաբերությունները, կոռուպցիայի քողարկված և ստվերային բնույթով պայմանավորված այլ գործոններ: Այս առումով կոռուպցիայի ուսումնասիրությունը բավականին բարդ է: Այն էլ ավելի է բարդանում՝ պայմանավորված կոռուպցիոն երևույթների անընդհատ աճող տեսակներով ու զարգացումների բազմաշերտությամբ: Սա նշանակում է կոռուպցիայի վերաբերյալ գոյություն ունեցող մեկնաբանությունների և կարծիքների անընդհատ վերանայման և ճշգրտման անհրաժեշտություն[1]:

Կոռուպցիայի վերաբերյալ մտահոգությունն այնքան հին է, որքան պետականությունը և կառավարման գիտակարգը: Դեռևս մ.թ.ա. 350 թ.-ին Արիստոտելն իր «Քաղաքականություն» աշխատության մեջ առաջարկել է. «Գանձարանը կողոպուտից զերծ պահելու նպատակով թող դրամը հատվի բացեիբաց՝ ամբողջ քաղաքի աչքի առաջ»[2]: Ստացվում է, որ դեռևս այդ ժամանակաշրջանում եղել է շահի կամ օգուտի շարժառիթով քողարկված գործունեության երևույթներ, որոնք էլ արտացոլվել են հույն փիլիսոփայի մտահոգություններում:

Կոռուպցիա երևույթը հայտնի է վաղուց, սակայն որպես սոցիալական իրողություն սկսել է շրջանառվել վերջին տասնամյակների ընթացքում: «Կոռուպցիա» եզրույթի կիրառումը քաղաքականության մեջ վերագրվում է Արիստոտելին, որը բռնապետությունը սահմանում էր որպես սխալ, փչացած, այսինքն՝ միապետության կոռումպացված ձև: Հռոմեական իրավունքի մեջ այդ տերմինով բնորոշվում էր մի քանի անձանց գործունեությունը, որը հանգեցնում էր դատական գործընթացի կամ հասարակական կառավարման բնականոն ընթացքի խաթարմանը:

«Կոռուպցիա» հասկացության ժամանակակից սահմանումներից առավել համառոտներից է Ջ.Սենտուրիայի բնորոշումը. «սեփական շահի համար հասարակական իշխանության չարաշահում»[3]: Կարելի է ասել՝ այս մոտեցումը տալիս է կո-

---

[1] Տե՛ս **Սարիբեկյան Ա.,** Կոռուպցիայի տեսագործնական հիմնախնդիրների շուրջ// Հայկական տնտեսագիտական հանդես, Երևան// 2020, էջ 58:

[2] Տե՛ս **Shah A**. 2007. Performing Accountability and Combating Corruption. The World Bank, Washington D. C.

[3] Տե՛ս **Senturia Joseph J**. Corruption, Political. Encyclopedia of the Social Sciences. New York, The Macmillan Company, 1931, vol. IV, էջ 448-452.

ռուպցիայի ընդհանրական և առանցքային բնութագրումը, որը կարող ենք հիմք ընդունել կոռուպցիան սահմանելիս:

Հետազոտողների հիմնական մասը կոռուպցիա է համարում կաշառակերությունն ու պաշտոնական դիրքի չարաշահումը: Նման մոտեցում են ցուցաբերում նաև միջազգային կազմակերպությունները: Մասնավորապես, 1979 թ. դեկտեմբերի 17-ին ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից ընդունած 34/169 որոշման մեջ՝ իրավակարգը պահպանող պաշտոնատար անձի վարքի կանոնակարգում կոռուպցիան սահմանված է որպես «անհատական կամ խմբային շահի համար պաշտոնական դիրքի չարաշահում, ինչպես նաև պետական ծառայողների կողմից պաշտոնական դիրքով պայմանավորված անօրինական ճանապարհով շահի ստացում»[1]:

Ս. Ռոուզ-Ակերմանը կոռուպցիայի յուրաքանչյուր դրսևորման կապակցությամբ նշում է գործողության թաքնված, գաղտնի բնույթը: Ըստ նրա՝ ինչը չի թաքցվում հասարակությունից, և ինչը հասարակության ընկալմամբ թույլատրելի է համարվում, կոռուպցիայի հետ որևէ առնչություն չունի[2]: Այս առումով անհրաժեշտ ենք համարում նշել, որ նման մոտեցման հարցում կարևոր է նաև հասարակության իրավագիտակցության համապատասխան մակարդակը, քանի որ մի շարք դեպքերում հասարակությունը չի կարող պատշաճ գնահատել վարքագծի՝ կոռուպցիոն բնույթ ունենալու հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը, ուստի կոռուպցիայի գոյությունը միայն հասարակության ընկալման հետ կապելը, մեր դիտարկմամբ, այնքան էլ արդյունավետ մոտեցում չէ:

Ա. Հայդենհայմերը կոռուպցիան բաժանում է երեք գույների՝ սպիտակ, մոխրագույն և սև: Առաջինը խորհրդանշում է կոռուպցիոն գործունեության այն տեսակը, որի հանդեպ հասարակությունում գոյություն ունի փոխհամաձայնություն. տվյալ գործունեությունը չի համարվում դատապարտելի: Դա, ըստ էության, երկրի իրավական մշակույթի մաս է կազմում: Սև կոռուպցիան նույնպես փոխհամաձայնության դրսևորում ունի, սակայն գտնվում է լրիվ հակադիր բևեռում: Տվյալ գործունեությունը քննադատվում է հասարակական բոլոր շերտերի կողմից: Մոխրագույն կոռուպցիայի առնչությամբ որևէ համաձայնություն գոյություն չունի, և հենց այս տիպի կոռուպցիայի դեպքում է հասարակության մեջ մեծ աղմուկ բարձրանում[3]:

Կոռուպցիան ուսումնասիրողները և օբյեկտիվ մեկնաբանողները սովորաբար կենտրոնանում են կոռուպցիոն գործընթացների երեք հնարավոր առնչություններից մեկի շուրջ՝ պետական, շուկայական կամ հասարակական[4]:

Կոռուպցիայի հաճախ հանդիպող սահմանումներից մեկը, որն ընգրկում է կոռուպցիոն գործունեության լայն շրջանակ, այն ձևակերպում է որպես «պետական կամ մասնավոր պաշտոնի չարաշահում անձնական շահի համար»: Այս սահմանումը կարող է օգտակար լինել հակակոռուպցիոն ռազմավարությունների, գործողությունների ծրագրերի և կոռուպցիայի կանխարգելման միջոցառումների քաղաքականության մշակման և իրազեկման համար[5]:

Հարկ ենք համարում ներկայացնել նաև ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական մակարդակներում կոռուպցիայի բնորոշմանը վերաբերող մոտեցումները՝ բացահայտելու դրա բովանդակության սահմանները:

---

[1] Տե՛ս UN General Assembly, (34th sess., 1979-1980), Code of Conduct For Law Enforcement Officials 34/169, A_RES_34_169-EN.pdf

[2] Տե՛ս **Rose-Ackerman S.,** Lagunes P., eds. Greed, Corruption and Modern State. Cheltenham (UK), Edward Elgar Publishing, 2015, էջ 384:

[3] Տե՛ս **Heidenheimered Arnold J.,** ed. Political Corruption: Readings in Comparative Analysis. New York, Routledge, 1970, էջ 582:

[4] Տե՛ս **Селезнов Ю.А.** (2010) Научно-практическое значение зарубежных исследований коррупции для современной России// Вестник ТГУ, вып. 3 (83), 2010, էջ 229:

[5] Տե՛ս Organisation for Economic Co-operation and Development, Corruption a glossary of international criminal standards, 2.2, https://www.oecd.org/corruption/anti-bribery/39532693.pdf

Գոյություն ունեն կոռուպցիայի վերաբերյալ երեք կոնվենցիաներ՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա, Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա:

Այսպես. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի շրջանակներում խոսվում է կոռուպցիայի հետևանքների, դրա դեմ պայքարի կարևորության, կանխարգելիչ միջոցառումների մասին, սակայն Կոնվենցիան չի պարունակում կոռուպցիայի ամբողջական բնորոշման կամ սահմանման վերաբերյալ որևէ ամրագրում: Ավելին՝ սույն կոնվենցիայի 2-րդ հոդվածը վերաբերում է կոնվենցիայում կիրառվող մի շարք եզրույթների բովանդակության բացահայտմանը, սակայն դրանցում խոսք չկա հենց «կոռուպցիա» եզրույթի վերաբերյալ:

Գրեթե նույն մոտեցումը դրսևորված է նաև Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայում, որն էլ, իր ոլորտային առանձնահատկությամբ պայմանավորված, կոռուպցիայի բովանդակությունն անուղղակիորեն սահմանափակում է գլխավորապես կաշառակերությամբ՝ նախատեսելով դրա դրսևորման ակտիվ և պասիվ ձևերը:

Այս առումով հետաքրքրական է, որ Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիայի 2-րդ հոդվածով տրվում է կոռուպցիայի սահմանումը՝ նշելով, որ սույն Կոնվենցիայի նպատակների համար «կոռուպցիա» նշանակում է՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կաշառք կամ որևէ անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջելը, առաջարկելը, տալը կամ ընդունելը, որը խախտում է կաշառք, անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջողի կողմից ցանկացած պարտականության պատշաճ կատարումը կամ պահանջվող վարքագիծը[1]:

Ինչպես նկատեցինք, կոռուպցիայի վերոնշյալ սահմանումը վերաբերում է բացառապես Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիային, ուստի չենք կարող այն դիտարկել որպես կոռուպցիայի համընդհանուր սահմանում:

Այս առումով գտնում ենք, որ վերոնշյալ միջազգային իրավական փաստաթղթերից թերևս հենց ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան պետք է նախատեսեր կոռուպցիայի սահմանումը, քանի որ իրատեսական չէ պայքարել ինչ-որ բանի դեմ, առանց հստակեցնելու դրա սահմաններն ու բովանդակությունը:

Թեև վերոնշյալ կոնվենցիաները չեն նախատեսում կոռուպցիայի հստակ, ամբողջական և ընդհանուր սահմանում, միևնույն ժամանակ դրանք իրենց կարգավորումների բովանդակության և մեկնաբանության շնորհիվ հնարավորություն են ընձեռում կատարելու համապատասխան եզրահանգումներ կոռուպցիայի բնորոշման վերաբերյալ:

Մասնավորապես՝ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի համակարգային ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռում արձանագրելու, որ կոռուպցիայի բովանդակությունը ներառում է պաշտոնատար անձանց կաշառակեր, անազնիվ և անպատասխանատու վարքագիծը, հանրային գնումների և պետական ֆինանսների կառավարման խնդիրները, պետական վարչակազմում թափանցիկության բացակայությունը, ինչպես նաև մասնավոր հատվածում հաշվապահական հաշվառման ստանդարտների և աուդիտի ուժեղացման միջոցառումների անկատարությունը, որոնք բոլոր դեպքերում խարխլում են արդարությունը:

Քրեական և քաղաքացիական իրավունքների կոռուպցիայի մասին կոնվենցիաները, ոլորտային առանձնահատկություններով պայմանավորված, նախատեսում են ակտիվ և պասիվ կաշառակերության, դրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցների, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների դեպքում վնասի հատուցմանը վերաբերող կարգավորումներ:

[1]Տե՛ս Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24512

Հետաքրքրական է նաև ՀՀ ներպետական օրենսդրական մակարդակներում կոռուպցիայի բնորոշման և սահմանման հարցի ուսումնասիրումը: Այստեղ անհրաժեշտ ենք համարում առանձնացնել հետևյալ նկատառումները.

Դեռևս 2000-ական թվականների սկզբին ՀՀ կառավարությունն ամբողջականացրել է կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը, օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմնական շրջանակները: Մասնավորապես, 2003 թ. նոյեմբերի 6-ին ՀՀ կառավարության N 1522-Ն որոշմամբ հաստատվել են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների 2003-2007 թթ. ծրագիրը, որոնք սահմանում էին կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը: Նշված ռազմավարությունը միտված էր կոռուպցիայի հաղթահարմանը, այն ծնող և դրա տարածումը խթանող պատճառների ու պայմանների վերացմանը, երկրում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորմանը:

Վերոնշյալ որոշման 1-ին մասով տրվում է կոռուպցիայի սահմանումը, որի համաձայն՝ կոռուպցիան անձնական կամ շահադիտական այլ նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է: Կոռուպցիան որպես վստահված իշխանության չարաշահում ունի մի շարք դրսևորումներ և բազում «նրբերանգներ», որոնցից են կաշառակերությունը՝ կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը, կաշառքի շորթումը, հովանավորչությունը, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաև պաշտոնեական այլ չարաշահումները[1]:

Սակայն հակակոռուպցիոն ռազմավարության մշակման հաջորդ որոշումներում գործադիրը որևէ կերպ չի անդրադարձել կոռուպցիայի սահմանմանը. դա նշանակում է, որ բոլոր դեպքերում հիմք է ընդունվել 2003 թվականի որոշմամբ տրված սահմանումը, որը, մեր դիտարկմամբ, չի կարող լինել արդյունավետ մոտեցում, քանի որ կոռուպցիան իր բնույթով դինամիկ երևույթ է, ուստի հարափոփոխ հասարակական հարաբերությունների համատեքստում այն մշտապես կարող է կրել բովանդակային մի շարք փոփոխություններ, որոնք յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դրա դեմ պայքարի ռազմավարական յուրաքանչյուր փաստաթղթի շրջանակներում պետք է ունենան հստակ արտացոլում: Այս առումով գտնում ենք, որ կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական յուրաքանչյուր փաստաթուղթ գոնե տվյալ ռազմավարության նպատակների և խնդիրների համատեքստում պետք է ամրագրի կոռուպցիայի սահմանումը, հակառակ պարագայում դժվար կլինի գնահատել տվյալ ռազմավարության նպատակների իրագործվածության աստիճանն ու արդյունքների արդյունավետությունը:

Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով կոռուպցիայի բնորոշմանը՝ փաստում ենք, որ այն, բացի ներառված տարբեր հանցակազմերից, բնորոշվում է յուրաքանչյուր հասարակության ինքնագիտակցության, մտածողության, պատկերացումների և աշխարհընկալման համատեքստում: Ինչու՞, որովհետև կոռուպցիան ծագում է մարդկային արարքների արդյունքում, ուստի դրանց պատճառներն ու դրա բովանդակության բացահայտումը պետք է իրականացնել հիմք ընդունելով, ի թիվս այլնի, յուրաքանչյուր հասարակարգի մտածելակերպին բնորոշ առանձնահատկությունները: Հենց սա է պատճառը, որ, մեր դիտարկմամբ, կոռուպցիայի դրսևորման մակարդակն ու դրա դեմ պայքարի միջոցների արդյունավետությունը տարբեր երկրներում ունեն դրսևորման տարբեր սահմաններ և ձևաչափեր: Մեր գնահատմամբ՝ կոռուպցիան առաջին հերթին յուրաքանչյուր անձի, ընդհանուր

[1]Տե՛ս ՀՀ կառավարության 2003 թ. նոյեմբերի 6-ի N 1522-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=31881

վերցրած հասարակարգի մտածողության մեջ է, ուստի դրա դեմ պայքարի միջոցների հարցում ևս պետք է որպես գլխավոր նշանակետ ընդունել անձանց մտածողությունն ու դրա վրա ազդելու ուղիները:

Ամփոփելով ողջ վերոնշյալ մոտեցումները կոռուպցիայի բնորոշման, դրա բովանդակության վերաբերյալ՝ նախ կարող ենք հանգել այն հետևության, որ կոռուպցիան իրապես բարդ և բազմաշերտ երևույթ է, որի ամբողջական և ընդհանուր սահմանման բացակայությունը պայմանավորված է նաև օբյեկտիվ իրողություններով, քանի որ կոռուպցիան դինամիկ երևույթ է և մշտապես կարող է ընդլայնել իր բովանդակային սահմանները՝ պայմանավորված կոռուպցիոն գործողությունների նոր դրսևորումներով:

Այնուամենայնիվ անհրաժեշտ ենք համարում ընդգծել կոռուպցիայի բնորոշման և սահմանման անհրաժեշտությունը՝ որպես դրա դեմ պայքարի միջոցների արդյունավետ իրականացման կարևորագույն հիմք:

Գտնում ենք, որ կոռուպցիայի վերաբերյալ ներկայացված միջազգային և ներպետական օրենսդրական բոլոր կարգավորումների, ինչպես նաև տեսական աղբյուրների լույսի ներքո կարող ենք արձանագրել, որ կոռուպցիայի բնորոշումը ենթադրում է դրա բաղադրատարր հանդիսացող այնպիսի պարտադիր գործոնների առկայություն, ինչպիսիք են՝

- Շահի կամ օգուտի հետապնդումը,
- Արդարության խաթարումը,
- Համաձայնությունը շահ կամ օգուտ ստանալու/տալու ուղղությամբ,
- Դիրքի չարաշահումը,
- Համակարգային բնույթը:

Ողջ վերոգրյալի լույսի ներքո կարող ենք առաջարկել կոռուպցիայի հետևյալ սահմանումը. **կոռուպցիան համակարգային մտածողության և վարքագծի ձև է այնպիսի համաձայնության շուրջ, որի համար ընդունելի է արդարության յուրաքանչյուր խաթարում, որը դրսևորվում է կամ կարող է դրսևորվել օգուտի կամ շահի շարժառիթով ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ՝ զուգակցվելով սեփական դիրքի չարաշահմամբ:**

ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ОПРЕДЕЛЕНИЯ КОРРУПЦИИ

Асмик Акобян
Соискатель кафедры конституционного права ЕГУ

Статья посвящена выявлению теоретических и практических проблем определения коррупции, наблюдение за которыми в рамках научного измерения может иметь существенное значение для того, чтобы сделать процесс борьбы с коррупцией более предметным и эффективным. Выявление содержания коррупции как комплекса проблем, ослабляющих стабильность и иммунитет правовых институтов общества, является важной гарантией преодоления этих проблем.

Изучение различных стратегических документов по развитию борьбы с коррупцией свидетельствует об отсутствии единого и общего определения коррупции, что в ряде случаев усложняет процесс оценки результатов реализуемой борьбы, поэтому обращение к теоретическим и практическим проблемам определения коррупции вытекает именно из существования

вышеуказанных проблем. В результате комплексного изучения теоретических источников и положений правовых актов в статье были подняты компоненты, играющие ключевую роль в определении коррупции. К числу таких компонентов относятся погоня за прибылью или выгодой, искажение справедливости, согласие на получение/предоставление выгоды или прибыли, злоупотребление служебным положением, системный характер. В свете учета вышеуказанных составляющих и раскрытия их содержания было и представлено определение коррупции.

THEORETICAL PROBLEMS OF THE CHARACTERIZATION OF CORRUPTION

Hasmik Hakobyan
PhD applicant at the YSU Chair of Constitutional law

The article is dedicated to the identification of theoretical and practical problems of defining corruption, the observation of which in the framework of the scientific dimension can be important in making the process of fighting corruption more objective and effective. Revealing the content of corruption as a set of problems weakening the stability and immunity of legal institutions of society is an important guarantee of overcoming these problems.

The study of various strategic documents for the development of the fight against corruption indicates the lack of a unified and general definition of corruption, which in several cases complicates the process of evaluating the results of the implemented fight, so the reference to the theoretical and practical problems of the definition of corruption stems from the existence of the above problems. As a result of a complex study of the theoretical literature and regulations of legal acts, the article highlights the components that play a key role in the definition of corruption. Among those components are pursuit of profit or benefit, distortion of justice, agreement to receive/give benefit, abuse of position, systemic nature. The definition of corruption was also presented in the light of the accounting of the above components and the disclosure of their content.

Բանալի բառեր – *կոռուպցիա, կաշառակերություն, կոռուպցիայի դեմ պայքար, իշխանության չարաշահում, պաշտոնական դիրքի չարաշահում, շահի կամ օգուտի ստացում, հակակոռուպցիոն ռազմավարություն*
Ключевые слова: *коррупция, взяточничество, борьба с коррупцией, злоупотребление властью, злоупотребление служебным положением, получение прибыли или выгоды, антикоррупционная стратегия*
Key words: *corruption, bribery, fight against corruption, abuse of power, abuse of official position, receiving profit or benefit, anti-corruption strategy*